

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
(Բոլոր փաստաթղթերը բերված են քաղվածաբար)

ՀՀ Սահմանադրություն և Մարդու իրավունքների Հռչակագիր.....	2
Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների առկա իրավիճակը Հայաստանում, իրավական պահպանությունը և բարեփոխումները.....	3
Միջազգային պայմանագրեր և կոնվենցիաներ.....	17
Բեռնի Կոնվենցիան Գրական-գեղարվեստական երկերի պահպանության մասին.....	18
Հռոմի Կոնվենցիան Կատարողների, հնչյունագրեր արտադրողների և հեռարձակող կազմակերպությունների իրավունքների պահպանության մասին.....	21
Ժնևի Կոնվենցիան Հնչյունագրեր արտադրողների իրավունքները իրենց հնչյունագրերը անօրինական պատճենահանումից պաշտպանելու մասին.....	24
Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության Հեղինակային իրավունքի մասին պայմանագիր, Կատարումների և հնչյունագրերի մասին պայմանագիր (Ինտերնետային պայմանագրեր).....	25
Մտավոր սեփականության իրավունքների՝ առևտրին առնչվող հայեցակետերի մասին համաձայնագիր (TRIPS).....	27
Արբանյակների միջոցով հաղորդվող ծրագրեր կրող ազդանշանների տարածման մասին Բրյուսելի կոնվենցիա.....	28

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
Ընդունվել է Հանրաքվեով 1995թ. հուլիսի 5-ին
Փոփոխվել 27 նոյեմբերի 2005թ. հանրաքվեով
Քաղվածք**

Հոդված 31.

Յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը:

Մտավոր սեփականությունը պաշտպանվում է օրենքով:

**ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՌՉԱԿԱԳԻՐ**

Ընդունվել է և հռչակվել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի
1948 թ. դեկտեմբերի 10-ի 217Ա (III) բանաձևով

Հոդված 27.

1. Յուրաքանչյուր ոք ունի հասարակության մշակութային կյանքին ազատորեն մասնակցելու, արվեստից բավականություն ստանալու, գիտական առաջընթացին մասնակցելու և նրա բարիքներից օգտվելու իրավունք:
2. Յուրաքանչյուր ոք ունի հեղինակած գիտական, գրական կամ զեղարվեստական աշխատանքի արդյունքն հանդիսացող իր բարոյական և նյութական շահերի պաշտպանության իրավունք:

**Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների
առկա իրավիճակը Հայաստանում, իրավական պահպանությունը
և բարեփոխումները**

Խորհրդային Միության 70 տարիների ընթացքում Հայաստանի Հանրապետությունում հեղինակային իրավունքները կանոնակարգվում էին միմիայն համամիութենական հանրահայտ գործակալության (ԲԱԱՊ) հայկական մասնաճյուղի միջոցով: ԽՍՀՄ-ի փլուզումից հետո անկախություն ստացած Հայաստանի մտավոր սեփականության, այդ թվում նաև, հեղինակային իրավունքների պահպանության, պաշտպանության և իրավակիրարկման ասպարեզում ի հայտ եկան մի շարք դժվարություններ: 1996-ին առաջին անգամ ընդունվեց առանձին օրենք «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին», որով հարակից իրավունքները ճանաչվեցին որպես իրավունքի նոր տեսակ: Անհրաժեշտ էր նաև հեղինակների իրավունքների պահպանությունն ապահովել ոչ միայն Հայաստանում, այլև արտերկրում, քանի որ սահմաններ չճանաչող արվեստի ստեղծագործությունները սկսեցին անարգել տարածվել աշխարհով մեկ, իսկ հայաստանյան օրենքները դրանց պահպանությունն ապահովում էին միայն երկրի ներսում: Ահա թե ինչու անմիջապես խնդիր դրվեց անդամակցել ոլորտում եղած միջազգային կարևոր համաձայնագրերին ու մյուս փաստաթղթերին՝ միջազգային չափանիշներին համապատասխանող իրավական դաշտ ապահովելու նպատակով: Այդ գործընթացն սկսվեց և հաջողությամբ իրականացվում է առ այսօր:

Բոլորիս է քաջ հայտնի՝ ստեղծագործությունը մտավոր ստեղծագործական աշխատանքի յուրօրինակ արդյունք է և արտահայտում է այն ստեղծողի աշխարհայացքը, զգացմունքները, խոհերը, ձգտումները, մի խոսքով այն դառնում է հեղինակի ներաշխարհի յուրատեսակ հայելի: Հասարակության կողմից ստեղծագործությունների օրեցօր լայն օգտագործումը չնայած մի կողմից դառնում է գնահատանքի միջոց, սակայն, մյուս կողմից, տեղիք է տալիս լուրջ անհանգստության, քանի որ ոչ միայն ցանկալի, այլև անհրաժեշտ է ճանաչել և հարգել հեղինակի իրավունքներն իր ստեղծագործության նկատմամբ: Ամեննին էլ պարտադիր չէ ստեղծագործությունը ստեղծելիս հեղինակային իրավունքի օրենքի գիտակ լինել, սակայն հեղինակի և ստեղծագործությունն օգտագործողի միջև հարաբերությունները կարգավորելու գործում օրենքի իմացությունն անխուսափելի է: Սեփական իրավունքներին իրազեկ լինելը չափազանց կարևոր է թե հեղինակի և թե ստեղծագործությունն օգտագործողի համար, քանի որ ցանկացած խախտում ծնվում է առավելապես չիմացությունից, սակայն, հայտնի ճշմարտություն է, օրենք չիմանալը չի ազատում պատասխանատվությունից:

Այդուհանդերձ պետք է նշել, որ իրավատերերը ոչ միշտ են իրագրել իրենց իրավունքներին, հաճախ էլ չեն առաջնորդվում իրենց ստեղծագործությունները օգտագործողի հետ հեղինակային գրավոր պայմանագիր կնքելու սկզբունքով, որը վճռորոշ դեր է կատարում վիճելի իրավիճակներում:

Փորձը ցույց է տալիս, որ խախտումների դեպքում, սովորաբար, պայմանագիր չի լինում կամ, եթե լինում է, ապա՝ հեղինակի համար ոչ այնքան ընդունելի պայմաններով, և դրանում, ինչ խոսք, կա հեղինակի մեղքի բաժինը, քանի որ նույնիսկ պայմանագիրը ստորագրելու պահին նա չի էլ կարողում այն կամ ուշադիր չի կարողում, որովհետև պայմանագրին լուրջ չեն մոտենում: Այսինքն, գործում են բարիդրացիական, ընկեր-բարեկամ հարաբերությունները, անհիմն վստահությունը մյուս կողմի նկատմամբ, համոզվածությունը, որ իր իրավունքները չեն խախտվի, նույնիսկ գրավոր պայմանագրի բացակայությունը հիմնավորում են, թե՛ «դե մենք ընկերներ ենք, շատ լավ հարաբերություններ ունենք, անհարմար է նույնիսկ գրավոր պայմանագրի մասին խոսելը, որովհետև դա կնշանակի, որ չեմ հավատում նրա խոսքին»:

Հաջորդ և ոչ պակաս լուրջ պատճառը հրատարակիչ-հեղինակ հարաբերություններում նժարի ավելի ծանր կողմում հրատարակչի հայտնվելն է, ելնելով ֆինանսական միջոցներ ունենալու և պայմաններ թելադրելու դիրքից: Հեղինակը միշտ հայտնվում է ավելի թույլ կողմում և զիջողի դերում, քանի որ հրատարակչական ծախսերն էլ, ինչպես որ այսօր ընդունված է, ստիպված է կատարել անձամբ ինքը՝ հեղինակը (ցավոք, մեր օրերում հակառակը շատ քիչ է հանդիպում):

Հաջորդ և, կարելի է ասել ճակատագրական պատճառն այն է, որ հեղինակները չունեն բավարար ֆինանսական միջոցներ ապահովելու անհրաժեշտ ծախսերը դատարանի միջոցով իրենց խախտված իրավունքները պաշտպանելու համար: Այդ առումով նրանք շատ հաճախ հայտնվում են անելանելի ու բարդ իրադրության մեջ հատկապես ապացուցելու, հիմնավորելու դժվարության տեսանկյունից, եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ «հեղինակային իրավունքը ծագում է ստեղծագործության ստեղծման փաստով և կախված չէ պաշտոնական հաստատագրումից կամ ստեղծագործության գրանցումից», չնայած դրա կարիքը երբեք էլ չպետք է առաջանա, քանի որ ըստ օրենքի՝ հեղինակային իրավունքը կախված չէ պաշտոնական հաստատագրումից, ստեղծագործության գրանցումից կամ այլ ձևականությունների կատարումից:

Ընդհանրապես, հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների օրենսդրական դաշտը համապատասխանեցված է միջազգային չափանիշներին. հաշվի են առնված ոլորտում առկա Բեռնի, Հռոմի, Ժնևի Հնչյունագրերի, Բրյուսելյան կոնվենցիաների, TRIPS Համաձայնագրի, ինչպես նաև Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության Ինտերնետային պայմանագրերի (WIPO WCT, WPPT) և Եվրամիության դիրեկտիվների հիմնական դրույթները:

Հայաստանն անդամակցում է Միավորված ազգերի կազմակերպությանը, Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպությանը, Առևտրի համաշխարհային կազմակերպությանը:

Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների օրենսդրական դաշտը մեզանում կարգավորվում է.

- ՀՀ Սահմանադրությամբ
- Քաղաքացիական օրենսգրքի 10-րդ բաժնով,
- Քրեական օրենսգրքի 158-րդ հոդվածով,
- Մաքսային օրենսգրքի 14-րդ բաժնով,
- «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» 2006թ. ՀՀ օրենքով,
- ՀՀ կառավարության 11.01.2007թ. հեղինակային վարձատրության նվազագույն դրույքաչափերի մասին N 506-Ն որոշմամբ (որոշ իրավունքների մասով):

Ինչպես մեզ հայտնի է, «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքը (այսուհետ՝ Օրենք) հստակ սահմանում է իրավատերերի մենաշնորհը՝ թույլատրել կամ արգելել այլ անձանց իրենց իրավունքի օբյեկտի, այն է գրականության, արվեստի և գիտության ոլորտի ստեղծագործությունների օգտագործումը: Օգտագործում ասելով հասկանում ենք ստեղծագործության օրինակների վերարտադրությունը և տարածումը՝ ներառյալ ձայնատեսագրության միջոցով, թարգմանությունը, վերափոխումը, վարձույթով տալը, հրապարակային կատարումը, հեռարձակումը, հանրությանը հաղորդումը նաև համակարգչային ցանցերի միջոցով և այլն: Հեղինակը տիրապետում է նաև անձնական ոչ գույքային բացառիկ իրավունքներ. ինչպես հեղինակ ճանաչվելը, ստեղծագործության առաջին հրապարակումն իրականացնելը, ստեղծագործությունն իր անունով կամ կեղծանունով օգտագործելը, համբավի և արժանապատվության իրավունքը, հետկանչի իրավունքը: անհրաժեշտ եմ համարում նշել. Որ գույքային իրավունքները ունեն ժամանակային սահմանափակում, կարող են պայմանագրով փոխանցվել այլ անձի, իսկ անձնական ոչ գույքային իրավունքները գործում են անժամկետ և անփոխանցելի են:

Իհարկե բացառիկ իրավունքների հետ միասին Օրենքը նախատեսել է նաև հեղինակի իրավունքների սահմանափակումներ, այսինքն ստեղծագործությունների ազատ օգտագործման դեպքեր, երբ իրավատերերի թույլտվությունը պետք չէ հարցնել և առավել ևս՝ նրան վճարել, սակայն պետք է պարտադիր նշել նրա անունն ու ձեռքբերման սկզբնաղբյուրը. օրինակ՝ ուսուցողական, տեղեկատվական, ոչ առևտրային, այսինքն շահույթ չակնկալելու նպատակով գրական գործերից մեջբերումներ, հատվածներ, քաղվածքներ օգտագործելը: Գիտելիքը հանրության զարգացման, առաջընթացի գործում կարևորագույն տեղ է զբաղեցնում, և այդ իմաստով անհրաժեշտ է էլ ավելի ընդլայնել հեղինակի իրավունքների սահմանափակումները գրադարանների ու կրթական հաստատությունների համար,

հնարավորություն ստեղծել և մատչելի դարձնել հեղինակային իրավունքով պահպանվող ստեղծագործությունները ուսուցողական և հետազոտական աշխատանքների իրականացման համար:

Այս իրավունքներն առավել կարևորվում են նաև հրատարակչական ոլորտում: Հրատարակիչը պետք է հետևի Օրենքի դրույթներին և իր գործունեության ընթացքում հնարավորինս զերծ մնա հեղինակի իրավունքի խախտումներ թույլ տալուց, մասնավորապես պետք է հեղինակի հետ կնքի գրավոր պայմանագիր՝ քննարկելով յուրաքանչյուր դրույթ և սահմանելով կողմերի համար բարենպաստ պայմաններ, պետք է սահմանի պայմանագրի գործողության ողջամիտ ժամկետ, քանզի այսօր իրականությունը ցույց է տալիս, որ պայմանագրերի գործողության ժամկետները սահմանվում են բավականին երկար, 20-25 տարով, անգամ հանդիպում են հրատարակչի կողմից առաջարկված պայմանագրեր, որտեղ բացառիկ իրավունքներն անցնում են հրատարակչին անժամկետ կամ հետմահու՝ օրենքով սահմանված ամբողջ ժամկետի ընթացքում: Այս երևույթներն ուղղակիորեն ապացուցում են, որ հեղինակն ընդհանրապես չի կարևորել պայմանագրի կետերը, նրան ուղղակի պետք է եղել հրատարակել իր գիրքն՝ առանց հաշվի առնելու հրատարակչի առաջարկած պայմանները: Փաստերը վկայում են, որ պայմանագրերը մեծ մասամբ հեղինակի հետ կնքվում են ոչ թե նախքան գրքի հրատարակումը, այլ հրատարակելուց հետո, և հեղինակը ստորագրում է այն, քանի որ գիրքն արդեն լույս է տեսել: Բնականաբար, պայմանագրում տեղ գտած անճշտությունների մասին խոսելն արդեն անիմաստ է դառնում: Այս երևույթի պատճառները նշելուց և Օրենքի համապատասխան դրույթը հեղինակին պարզաբանելուց հետո պայմանագրի այդ կետերը որոշ դեպքերում վերանայվում են:

Հեղինակի թույլտվությունը պետք է ձեռք բերել նախապես, նախքան ստեղծագործության օգտագործումը: Հեղինակը պետք է թույլատրի իր ստեղծագործության ցանկացած ձևով վերարտադրությունը, տարածումը, թարգմանությունը, դրանում փոփոխություններ կատարելը և յուրաքանչյուր օգտագործման համար ստանա վարձատրություն, քանի որ եթե հեղինակը անգամ հրաժարվի վարձատրությունից, այդ հրաժարականն առոչինչ է այն պար պատճառով, որ հակասում է Օրենքին: Ընդ որում, ինչպես արդեն նշեցինք, թույլտվությունը տրվում է հեղինակի և հրատարակչի միջև կնքված գրավոր պայմանագրով, որտեղ սահմանվում են նաև վարձատրության չափը, վճարման եղանակը, ստեղծագործության օգտագործման եղանակը, փոխանցված իրավունքների ծավալը, ժամկետը և տարածքը:

Ստեղծագործությունն օգտագործելու համար ինչպես ձեռք բերել հեղինակի թույլտվությունը: Նախ, հաշվի առնելով օգտագործվող ստեղծագործության բնույթը՝ առաջնահերթ պետք է ճշտել, արդյոք պահպանվում են այդ ստեղծագործության հեղինակի իրավունքները, այսինքն գույքային իրավունքների գործողության օրենքով սահմանված ետմահու 70-ամյա ժամկետը լրացել է, թե ոչ, արդյոք նա անդամակցում է գույքային իրավունքները կոլեկտիվ կառավարող «Հայհեղինակ» ՀԿ-ին, արտերկրի

հեղինակների դեպքում՝ որ երկրի քաղաքացի է կամ գույքային իրավունքները կոլեկտիվ կառավարող որ կազմակերպության անդամ է, և այնուհետև մտածել հեղինակային պայմանագիր կնքելու մասին: Գույքային իրավունքները կոլեկտիվ հիմունքներով կառավարող կազմակերպությունների օգնությունը չափազանց մեծ է այս հարցում, քանի որ հնարավորինս օգնում են տեղեկություններ ստանալ հեղինակի բնակավայրի մասին, ձեռք բերել անհրաժեշտ կոնտակտային տվյալներ: Օգտակար կարող են լինել նաև ստեղծագործական միությունները:

Ճշտումներից հետո հեղինակի հետ կնքվում է գրավոր պայմանագիր: Պայմանագիրը կարող է լինել բացառիկ կամ ոչ բացառիկ, հատուցելի և պետք է շատ հստակ և մանրամասն ներկայացվեն կարգավորվող իրավունքները, այսինքն պետք է հստակ նշվեն ստեղծագործությունն օգտագործելու եղանակները, օրինակ՝ գրական գործը հրատարակելու, թարգմանելու, վերահրատարակելու իրավունքը (քանի որ պայմանագրում չընդգրկված իրավունքները պատկանում են հեղինակին), օգտագործման ժամկետը, հեղինակին վճարվող վարձատրության չափը, ժամկետը, վճարման ձևերը՝ միանվագ են վճարելու նախքան ստեղծագործության օգտագործումը, թե՛ մաս-մաս, օգտագործման սկզբում և վերջում:

Վարձատրությունը միանվագ վճարելու դեպքում պայմանագրում սահմանվում է ստեղծագործության առավելագույն տպաքանակը, քանի որ հեղինակը հետո ի վիճակի չէ հսկելու, թե քանի օրինակ տպագրվեց և քանի օրինակ է վաճառվել, արդյոք վաճառվող օրինակները առաջին հրատարակության տպաքանակից են մնացել, թե վերահրատարակության օրինակներն են:

Հեղինակն իրավունք ունի ստեղծագործության յուրաքանչյուր օգտագործման դիմաց ստանալու հեղինակային վարձատրություն՝ բացառությամբ օրենքով սահմանված ազատ օգտագործման դեպքերի: Ինչպես արդեն նշեցինք հեղինակային վարձատրությունից հրաժարվելու մասին պայմանագիրն առոչինչ է:

Հեղինակային պայմանագրի կարևոր դրույթներից է նաև ստեղծագործության օգտագործման տարածքի մասին պայմանավորվածությունը, թե որտեղ պետք է վաճառվեն օրինակները՝ Հայաստանի տարածքում, թե նաև Հայաստանից դուրս: Հայաստանի սահմաններից դուրս տպաքանակ իրացնելու պայմանի դեպքում վարձատրության չափը որոշելիս պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ, որպես կանոն, Հայաստանից դուրս ստեղծագործության օրինակի վաճառքի գինը ավելի բարձր է սահմանվում, հետևաբար վարձատրությունն էլ այդ տպաքանակի համար պետք է համեմատաբար ավելի բարձր սահմանել, այսինքն հաշվի առնել տվյալ երկրի շուկայի առանձնահատկությունները: Եթե հեղինակային պայմանագրում չի նշվել ժամկետ, ապա պայմանագիրը գործում է հինգ տարի, իսկ եթե տարածքը չի նշվել, ապա այն գործում է միայն Հայաստանի Հանրապետության տարածքում: Առոչինչ են հեղինակային պայմանագրի այն պայմանները, որոնք հակասում են հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին օրենքի դրույթներին:

Պայմանագիր կնքելիս միշտ պետք է հաշվի առնել գույքային իրավունքների գործողության օրենքով սահմանված այսօր արդեն 70-ամյա ժամկետը, քանի որ այն

դեպքերում, երբ այդ ժամկետը լրանում է նախքան պայմանագրի ժամկետի ավարտը, ապա դադարում է նաև պայմանագիրը, այսինքն՝ չկա իրավունք, չկա և պայմանագիր: Պայմանագրով ձեռք բերված օգտագործման թույլտվությունը կողմը կարող է փոխանցել այլ անձի, եթե դա ուղղակիորեն նախատեսված է պայմանագրով: Բացի օգտագործման թույլտվությունից, իրավատերն իր գույքային իրավունքները կարող է պայմանագրով փոխանցել (զիջել) այլ անձի: Պայմանագրի պայմանները խախտող կողմը կրում է պատասխանատվություն օրենքով սահմանված կարգով:

Նմանատիպ դրույթներ են սահմանված նաև հարակից իրավատերերից հրատարակչի համար, ով հարակից իրավունքի սուբյեկտ ճանաչվել է ՀՀ 2006թ. օրենքով՝ իր հրատարակչական ձևավորումների օգտագործման տեսանկյունից: Նրա իրավունքի օբյեկտն օգտագործելու համար նույնպես պետք է նախապես հրատարակչի թույլտվությունը ձեռք բերել և վճարել: Այս դրույթներն ընդգրկվեցին օրենքում Հրատարակիչների ազգային ասոցիացիայի և հրատարակիչների, ինչպես նաև հեղինակների հետ երկար բանակցությունների, քննարկումների ու առաջարկությունների շնորհիվ:

Օրենքում ընդհանրապես նոր մոտեցում է նախատեսված ետմահու 70-ամյա ժամկետում հեղինակի չհրապարակված, անտիպ ստեղծագործությունների վերաբերյալ: Ցանկացած ֆիզիկական անձ, ով հեղինակի գույքային իրավունքների գործողության 70-ամյա ժամկետի ավարտից հետո առաջին անգամ օրինական ճանապարհով հրատարակում կամ հանրությանը մատչելի է դարձնում հեղինակի անտիպ ստեղծագործությունը, օգտվում է հեղինակի գույքային իրավունքներին համարժեք իրավունքներից՝ 25 տարի ժամկետով: Այս դրույթները պայմանավորված են Եվրամիության դիրեկտիվներով:

Իսկ ինչն է համարվում իրավախախտում:

Օրենքի 65-րդ հոդվածում սահմանված են այդ գործողությունները. դրանք են՝

-ստեղծագործության կամ դրա էական մասի օգտագործումն առանց նախապես իրավատիրոջ թույլտվության ձեռքբերման,

-ստեղծագործության օրինակների պատրաստումն առանց իրավատիրոջից նախապես ձեռք բերված թույլտվության,

-այդպիսի օրինակների վերարտադրությունը,

- գրագողությունը՝ ուրիշի ստեղծագործությունից մտքեր, հատվածներ քաղելը առանց դրանց ստեղծագործական վերամշակման և առանց ձեռքբերման սկզբնաղբյուրի նշման և այդ մտքերը իրեն վերագրելը կամ իր անվամբ ներկայացնելը:

Օրենքի պահանջները չկատարող անձը (այսինքն, նախապես օգտագործման թույլտվությունն ապահովելը, իրավատիրոջ թույլտվությամբ ստեղծագործության

կամ էական մասի վերարտադրելը, վարձատրություն վճարելը, ստեղծագործության անձեռնմխելիությունը պահպանելը) համարվում է հեղինակային կամ հարակից իրավունքները խախտող և կրում է պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով:

Իրավախախտումներ առկա են բոլոր ոլորտներում՝ համակարգչային ծրագրերի, երաժշտության, ֆիլմերի: Հետ չեն մնում նաև տպագիր արտադրանքի ոլորտի խախտումները: Այստեղ առավել հաճախ ենք հանդիպում իրավախախտման ներքոնշյալ տեսակներին. (հեղինակների ու հրատարակիչների անունները չեն հրապարակվում պարզ պատճառով).

-ստեղծագործության անօրինական վերարտադրությունը լուսապատճենման (քսերոքսի) եղանակով՝ առանց իրավատերերի թույլտվության և վճարման, օրինակ՝ հանրահայտ ռուս-հայերեն բառարանի անօրինական վերատպությունը արտերկրում, - հրատարակված գրքի վերահրատարակումը արտերկրում մեկ այլ հրատարակչի կողմից՝ առանց առաջին հրատարակչի և հեղինակի կամ ժառանգի թույլտվության և վճարման,

-թարգմանության հրատարակումն առանց թարգմանիչի անունը նշելու և հասանելիք հոնորարը վճարելու:

-գրքի վերահրատարակությունն առանց հեղինակի կամ ժառանգի թույլտվության և հոնորարի վճարման,

-գրքի վերահրատարակումը արտերկրում՝ այլ անձի անունով,

-գրադարանների կողմից գրքի օրինակների լուսապատճենման եղանակով պատրաստումը ուսանողների կամ ընթերցողների պահանջով՝ առանց իրավատերերի կամ ժառանգների թույլտվության ու վարձատրության, թեև գրադարաններում չի թույլատրվում ամբողջական գրքերի պատճենումը:

Իրավախախտումների դեպքում հեղինակն իր իրավունքները պաշտպանելու նպատակով կարող է դիմել դատարան, իսկ եթե հեղինակը կոլեկտիվ կառավարող համապատասխան կազմակերպության անդամ է, ապա նրա անունից դատարան կարող է դիմել այդ կազմակերպությունը՝ որպես նրա ներկայացուցիչ, և իրավունքները խախտողից պահանջել՝

-իր իրավունքների ճանաչում, եթե իրավախախտողը ժխտում կամ չի ճանաչում նրա իրավունքները,

-իր իրավունքը խախտող գործողությունների կասեցում, եթե դեռ շարունակվում է խախտում պարունակող գործողությունը,

-նմանակված օրինակների և դրանց պատրաստման համար օգտագործվող նյութերի ու սարքավորումների բռնագրավում կամ ոչնչացում,

-իրեն պատճառված վնասի հատուցում օրենքով սահմանված կարգով,

-փոխհատուցում հոնորարի կամ այն վարձատրության կրկնակի չափով, որը իրավատերը կստանար օբյեկտի օրինական օգտագործման համար, կամ փաստացի խախտման վնասին համարժեք վնասների հատուցում՝ ներառյալ բաց թողնված օգուտը: Վնասի չափը որոշվում է դատարանի կողմից:

–դատական վճռի հրապարակումը ՀՀ զանգվածային լրատվության միջոցներով:

Իրավատերն ինքն է որոշում իր իրավունքները պաշտպանելու որ միջոցն ընտրի:

Սահմանված է նաև պատասխանատվություն այն անձանց համար, ովքեր ինչ–որ ձևով առնչվում են խախտման հետ (տպագրողներ, ներկրողներ, նմանակված օրինակներ կամ իրավախախտում առաջացնող սարքավորումներ տիրապետողներ) և իրավախախտման փաստի դեպքում կեղծ օրինակների արտադրությանը և տարածմանը մասնակցող անձանց, ինչպես նաև այդ օրինակների ձեռքբերման աղբյուրների ու տարածման ուղիների մասին անմիջապես տեղեկություններ չեն հայտնում և խախտմանն առնչվող փաստաթղթերը չեն ներկայացնում:

Առանց իրավատիրոջ թույլտվության ստեղծագործությունն օգտագործող անձը պարտավոր է իրավատիրոջը հատուցել նրա կրած վնասները:

Ինչ խոսք, տեխնիկայի և գիտության անընդհատ զարգացման շնորհիվ այսօր ի հայտ են եկել ստեղծագործությունների օգտագործման նոր եղանակներ ու միջավայր, օրինակ՝ թվային միջավայրը, ինտերնետը, որը մի կողմից հրաշալի հնարավորություն է ստեղծագործությունների տարածման և ճանաչման համար, մյուս կողմից պարարտ հող է ապահովում իրավախախտումների համար: Այդ միջավայրում ցանկացած անձ, ցանկացած վայրից և ցանկացած պահին կարող է իրեն հասանելի դարձնել ինտերնետային կայքերում տեղադրված գրական գործերը, էլեկտրոնային գրադարանները, երգերը, ֆիլմերը, տեսահոլովակները: Այսպիսի օգտագործման դեպքում տարածքային սահմանները վերանում են և չափազանց դժվար է հետևել ստեղծագործության «ճամփորդությանը», առավել ևս խախտումների: Այդ առումով ստեղծագործությունը կայքերում, թվային գրադարաններում տեղադրելը պետք է թույլատրված լինի իրավատերերի կողմից: Իրավատիրոջ ցանկությամբ կարող են կիրառվել տեխնիկական պաշտպանիչ միջոցներ, որոնք կարգելեն ստեղծագործության օրինակի պատճենումը կամ պատճենելիս դրանք կստացվեն աղավաղված, խառնաշփոթ դասավորված կամ կոդավորված: Այս պաշտպանական միջոցները շրջանցողները, ինչպես նաև շրջանցումը հեշտացնող կամ շրջանցման հնարավորություն ստեղծող սարքավորումներ կամ մասեր վաճառողները, այդպիսի ծառայություններ մատուցողները, ովքեր նպաստում են ստեղծագործության առևտրային նպատակով պատճենմանն ու այդ օրինակների տարածմանը, կոդավորումն որպես իրավախախտողներ և կենթարկվեն օրենքով նախատեսված պատժամիջոցների:

Նույնատիպ պատասխանատվություն է սահմանվում նաև այն անձանց համար, ովքեր գիտակցաբար, առանց իրավատերերի թույլտվության, ստեղծագործության կամ հարակից իրավունքների օբյեկտի վրայից վերացնում կամ փոխում են իրավունքների մասին էլեկտրոնային տեղեկատվությունը և այդպիսի

օրինակները հանրությանը հասանելի դարձնում՝ դրանով իսկ նպաստելով հեղինակային և հարակից իրավունքների խախտումներին:

Հեղինակային և հարակից իրավունքների խախտման դեպքերում, երբ այդ արարքը կատարվում է զգալի կամ խոշոր չափերով, կիրառվում է ՀՀ Քրեական օրենսգրքի 158-րդ հոդվածը, որը նորովի է խմբագրվել և բավականին խիստ պատժամիջոցներ է նախատեսում իրավախախտների համար: Այն ուժի մեջ է մտել 2011թ. մարտի 1-ից: Պատժամիջոցների այս խստացումը պայմանավորված էր տեսաձայնային մագնիսական, թվային, օպտիկական, լազերային և ցանկացած այլ տեսակի էլեկտրոնային կրիչները հսկիչ նշաններով պարտադիր դրոշմավորելու մասին օրենքի ընդունումով: Ըստ 158 հոդվածի՝ հեղինակային կամ հարակից իրավունքի օբյեկտն ապօրինի օգտագործելը կամ հեղինակությունը յուրացնելը, ինչպես նաև առանց հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքների իրավատիրոջ համաձայնության նրա ստեղծագործությունը շահույթ ստանալու նպատակով տեսաձայնային մագնիսական, թվային, օպտիկական, լազերային կամ ցանկացած այլ տեսակի էլեկտրոնային կրիչի վրա ձայնագրելը, տարածելը եւ (կամ) վաճառելը, եթե այդ արարքը կատարվել է զգալի չափերով՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից հազարապատիկի չափով, կամ կալանքով՝ մեկից երկու ամիս ժամկետով կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով:

Նույն արարքը, որը կատարվել է՝

- 1) պաշտպանիչ տեխնիկական միջոցների շրջանցմամբ,
- 2) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,
- 3) մեկից ավելի անգամ,
- 4) ստացված դրոշմապիտակները դրանց օգտագործման համար չնախատեսված ստեղծագործությունների կրիչների վրա փակցնելով,
- 5) խոշոր չափերով՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հազարապատիկից երկուհազարապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

Արարքը համարվում է զգալի չափերով, եթե լիցենզիայի արժեքը կազմում է 50000–200000 դրամ, իսկ՝ խոշոր չափերով, եթե լիցենզիայի ընդհանուր արժեքը գերազանցում է 200.000 դրամը:

Իրավախախտում պարունակող արտադրանքը սահմանով անցկացնելու դեպքերը կանխելու նպատակով իրավատերը Մաքսային օրենսգրքի 14-րդ բաժնի դրույթների համաձայն, եթե բավարար հիմքեր ունի ենթադրելու, որ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով կարող են տեղափոխվել իր մտավոր սեփականության իրավունքները խախտող ապրանքներ, կարող է վերադաս մաքսային մարմին ներկայացնել դիմում (այսուհետ՝ կասեցման դիմում)՝ մտավոր սեփականության օբյեկտի գրանցման և ցանկացած մաքսային ռեժիմով այդ ապրանքների բացթողումը կասեցնելու խնդրանքով: Դիմումը պետք է պարունակի՝

մտավոր սեփականության օբյեկտի մանրամասն նկարագրությունը,
հայտատուի պարտավորությունը՝ հատուցել ապրանքների բացթողումը կասեցնելու
հետ կապված մաքսային մարմինների ծախսերը,
պարտավորություն՝ իր ներկայացրած դիմումի հիման վրա մաքսային մարմինների
կողմից ապրանքների կասեցման մասին տեղեկացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում
մաքսային մարմնին որոշված չափով գրավի կամ համարժեք այլ երաշխիքի
տրամադրմամբ:

Մաքսային մարմինը մտավոր սեփականության իրավունքները խախտող
ապրանքների բացահայտման որևէ անհաջողության համար
պատասխանատվություն չի կրում, պատասխանատվությունն ամբողջությամբ ընկած
է իրավատիրոջ ուսերին և այս բարդություններն են, որ շատ հաճախ նրանց
ստիպում են անտարբեր մնալ իրենց իրավունքների խախտման փաստերի
նկատմամբ:

Ներկայումս մշակման ընթացքում է հեղինակային իրավունքի և հարակից
իրավունքների մասին նոր օրենքի նախագիծը, որով նախատեսվում է հստակեցնել
արբանյակային և մալուխային հեռարձակման ու վերահեռարձակման
իրավունքները, սահմանել կատարողի և հնչյունագիր արտադրողի գույքային
իրավունքների պահպանության 70-ամյա ժամկետ, երգերի տեքստի և երաժշտության
հեղինակներին դիտել համահեղինակներ և նրանց գույքային իրավունքների
պահպանության 70-ամյա ժամկետը հաշվարկել վերջին համահեղինակի մահից
հետո, ընդլայնել հեղինակի իրավունքների սահմանափակումներն ու
բացառությունները գրադարանների, կրթական ու մշակութային
հաստատությունների համար, մասնավորապես փոփոխել ստեղծագործությունների
ձևաչափը թույլ տեսնողների կամ տեսողական ու ընթերցանության խնդիրներ
ունեցող անձանց հրապարակված ստեղծագործությունները մատչելի դարձնելու
նպատակով, կարգավորել անհայտ հեղինակների ստեղծագործությունների (որք
ստեղծագործություններ) օգտագործումը, որոնց հեղինակները հայտնի չեն կամ
հնարավոր չէ գտնել, խստացնել իրավունքների պաշտպանության դրույթները,
ինչպես նաև սահմանել կոլեկտիվ կառավարող կազմակերպությունների
հավատարմագրման գործընթացը:

Ինչ խոսք, իրավական կատարյալ փաստաթղթերը ինքնաբերաբար չեն գործի,
եթե իրավատերերը չհամախմբվեն և միավորված չներկայացնեն իրենց
անհանգստությունները: Բոլորիս քաջ հայտնի է, որ օրենքը կիրարկողը, հավուր
պատշաճի ու արդյունավետ գործողության մեջ դնողը մի կողմից իրավատերերն են,
մյուս կողմից օգտագործողները, այլապես իրավախախտումների դեմ պայքարը
ցանկալի արդյունք չի տա, քանի դեռ թերի է հեղինակ/իրավատեր-օրենք-
օգտագործող կապը:

Օրենքի առաջնահերթ խնդիրը իրավատերերի շահերը պաշտպանելն ու նրանց
նյութապես ապահովելն է: Գիտակցաբար ճանաչելով հեղինակի իրավունքներն իր
ստեղծագործության նկատմամբ և այդ ստեղծագործության օգտագործման համար

նրան վճարելով հասանելիք օրինական վարձատրությունը, ապահոված կլինենք նրա անձի հանդեպ հարգանքի երաշխիքը: Այս իմաստով խիստ կարևոր են իրավատերերին և հասարակության լայն շրջաններին այդ իրավունքների մասին իրազեկելը, Օրենքի նկատմամբ հարգանք ձևավորելն ու զարգացնելը, ստեղծագործությունն օգտագործողների վերաբերմունքը հեղինակների հանդեպ արմատապես փոխելը, մտավոր սեփականության օբյեկտների օգտագործմանն առնչվող գործարարների շրջանում բացատրական աշխատանքները, օրենքի կարևոր դրույթների պարզաբանումները, իրավապահների ու դատական համակարգի համար դասընթացներն ու կադրերի վերապատրաստումը, այլապես ինչքան էլ իրավական դաշտը հազեցած լինի միջազգային փաստաթղթերով, պատասխանատվության զգացումի ու հեղինակի իրավունքների հանդեպ հարգանքի բացակայության պարագայում օրենքը լիարժեք չի կիրարկվի:

2012 թ. փետրվարից Հայաստանում սկսվել է Թվինինգ երկամյա ծրագրի իրականացումը, որը նպատակաուղղված է հատկապես մտավոր սեփականության իրավունքների կիրարկման հզորացմանը՝ հիմնվելով այդ մասով առկա միջազգային լավագույն փորձին: Ծրագրում ընդգրկված են ոստիկանության ՄՍ ոլորտում կատարվող հանցագործությունների դեմ պայքարի վարչության, մաքսային ծառայության ու դատական համակարգի աշխատակիցներ: Կեղծարարության և անօրինական՝ պիրատական արտադրանքի դեմ պայքարն ուժեղացնելու, իրավախախտումները կանխելու նպատակով ՀՀ Վարչապետի որոշմամբ և ՀՀ էկոնոմիկայի նախարարի անմիջական ղեկավարությամբ ստեղծվել է միջգերատեսչական հանձնաժողով՝ Օբսերվատորիա : Հանձնաժողովում ընդգրկված են պետական և մասնավոր մարմինների ներկայացուցիչներ, ովքեր ներկայացնում են պրակտիկ խնդիրներն ու օրենսդրական բացերը և դրանց կանոնակարգման մասով առաջարկություններ ներկայացնում օրենսդիր մարմին:

Թվինինգ ծրագիրը ուշադրության կենտրոնում է պահում հանրության և մասնագետների իրազեկման բարձրացմանն ուղղված աշխատանքները, ուսուցողական դասընթացներ կազմակերպվում մաքսային ծառայության, ոստիկանության, դատախազության աշխատողների և դատավորների համար, ինչպես նաև իրականացնում այլ երկրների լավագույն փորձի փոխանակման և որակավորման բարձրացման նպատակով դասընթացներ:

Օրենսդրական համապատասխանությունների առումով մշակվում են քաղաքացիական, քաղաքացիական դատավարության և քրեական օրենսգրքերում փոփոխությունների նախագծեր, որոնց հիմնական նպատակը լինելու է մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության վերաբերյալ հողվածները և պատժամիջոցների խստացումը:

Իր աշխատանքներն է շարունակում ՀՀ Ոստիկանության մտավոր սեփականության պաշտպանությունն իրականացնող բաժինը:

Հատկապես կարևորվում է այս ծրագրով նախատեսված ընդհանուր տեղեկատվական բազայի ստեղծմանն ուղղությամբ տարվող աշխատանքները.

Բազան պարունակելու է մտավոր գրանցումների մասին տվյալները, դատական վճիռները, մաքսային տվյալները և այլն: 2012թ. իրականացվում է մաքսային գրանցամատյանում մտավոր սեփականության օբյեկտների գրանցումները:

Կուզենայի հատկապես առանձնացնել ԱՊՀ երկրների միջև 2010թ.նոյեմբերի 19-ին Սանկտ-Պետերբուրգում ստորագրված Մտավոր սեփականության իրավական պահպանության և պաշտպանության ոլորտում համագործակցության և մտավոր սեփականության իրավական պահպանության և պաշտպանության հարցերով Միջպետական խորհրդի ստեղծման մասին Համաձայնագիրը:

Համաձայնագրի կողմերի նպատակն է զարգացնել գիտա-տեխնիկական, առևտրա-տնտեսական և սոցիալ-մշակութային համագործակցությունը, այդ գործընթացում հիմնվելով մտավոր սեփականության արդյունավետ պահպանությանն ու պաշտպանությանը, որը մասնակից պետությունները կարող են իրականացնել միայն համաձայնեցված և կոորդինացված միջոցառումների շնորհիվ: Կողմերը մտավոր սեփականության պահպանության և պաշտպանության ոլորտում համագործակցությունն իրականացնում են՝

- հետազոտություններն համատեղ անցկացնելու և կարծիքներ փոխանակելու միջոցով,
- կողմերի օրենսդրության մասին տեղեկատվություն փոխանակելու միջոցով,
- միջազգային պայմանագրերի կնքմանն աջակցության միջոցով,
- մտավոր սեփականության ոլորտում իրավախախտումների նախազգուշացման, հայտնաբերմանն ու կանխման և այդպիսի իրավախախտումների դեմ համատեղ գործողությունների իրականացման միջոցով,
- մտավոր սեփականության ոլորտում իրավախախտումների նախազգուշացման և կանխման համար արդյունավետ միջոցների ձեռնարկման միջոցով,
- Համաձայնագրի մասնակից-պետությունների տնտեսվարող սուբյեկտների փոխադարձ պաշտպանություն անբարեխիղճ մրցակցությունից մտավոր սեփականության ոլորտում:

Կողմերն իրենց համագործակցությունն իրականացնելու համար ստեղծում են միջպետական խորհուրդ մտավոր սեփականության իրավական պահպանության և պաշտպանության հարցերով, իրականացնում են համագործակցությունն իրենց լիազոր (իրավասու) մարմինների միջոցով: Այս գործում իր պատասխանատու և կարևոր տեղն է զբաղեցնում նաև ՀՀ Էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի Մտավոր սեփականության գործակալությունը: Խորհուրդը գործում է իր կանոնադրությանը համապատասխան և մի շարք գործառույթների հետ նաև իրականացնում է ներքոնշյալ կարևոր գործառույթները.

- Համաձայնագրի մասնակից-պետությունների համատեղ գործունեության կոորդինացում մտավոր սեփականության իրավական պահպանության և պաշտպանության մեխանիզմների ստեղծման, զարգացման և կատարելագործման, գիտա-տեխնիկական, առևտրա-տնտեսական և սոցիալ-մշակութային համագործակցության զարգացման, մտավոր սեփականության ոլորտում իրավախախտումների նախագգուշական, հայտնաբերման և կանխման ուղղությամբ:

- Աջակցություն մտավոր սեփականության պահպանության և պաշտպանության ոլորտում օրենսդրական, նորմատիվային, մեթոդական և այլ տեղեկատվության փոխանակմանը:

- Երաշխիքների մշակում հետևյալ համակարգերի ստեղծման վերաբերյալ.

- մտավոր սեփականության իրավական պահպանության և պաշտպանության արդյունավետության բարձրացում,

- մտավոր սեփականության իրավական պահպանության և պաշտպանության ոլորտում անբարեխիղճ մրցակցության դեմ գործողություններ,

- նմանակված արտադրանքի արտադրության և տարածման դեմ գործողություններ,

- արդյունաբերական սեփականության, հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների օբյեկտների պաշտպանության մեխանիզմների կատարելագործում:

Նշված գործառույթներն իրականացնելու համար Խորհուրդն իրավունք ունի նաև ստեղծել մշտական գործող աշխատանքային հանձնաժողովներ ներքոնշյալ հարցերով՝

- հեղինակային իրավունք և հարակից իրավունքներ,

- արդյունաբերական սեփականություն,

- մտավոր սեփականության ոլորտում իրավախախտումների դեմ գործողությունների,

- ինչպես նաև փորձագետների ինչպես մշտական գործող, այնպես էլ ժամանակավոր միջպետական աշխատանքային խմբեր մտավոր սեփականության ոլորտում իրավախախտումների ու նմանակված արտադրանքի տարածման դեմ արդյունավետ միջոցների մշակման համար,

- մտավոր սեփականության պահպանության և պաշտպանության ոլորտում արտոնագրային, նորմատիվ-մեթոդական փաստաթղթերի և այլ տեղեկատվության փոխանակման հարցերի քննարկում,

- մտավոր սեփականության պահպանության և պաշտպանության համակարգի կատարելագործման վերաբերյալ առաջարկությունների մշակում:

Այս համաձայնագիրը կարևոր դեր ունի և խթան կհանդիսանա ԱՊՀ երկրների միջև մտավոր սեփականության պահպանության և պաշտպանության ուղղությամբ գործողությունների իրականացման համար հանգեցնելով իրավախախտումների

կանխամանր, համատեղ տեղեկատվական բազայի ստեղծմանը, կեղծարարության ու պիրատության մակարդակի նվազեցմանը:

Խիստ կարևոր հանգամանք է մտավոր սեփականություն ուսուցանող հայերեն նյութեր, ձեռնարկներ ապահովելը և տարածելը, ինչպես նաև բացատրական աշխատանքներն այն անձանց շրջանում, ովքեր իրենց հիմնական գործունեությամբ առնչվում են ստեղծագործությունների օգտագործման հետ: Կարևոր դեր ունեն նպատակային, կոնկրետ թեմաներով սեմինարները, օրենքի դրույթների պարզաբանումներն ու խախտման դեպքերի քննարկումները, վերապատրաստման դասընթացները, որոնք կօգնեն հիմնարար գիտելիքներ ձեռք բերել մտավոր սեփականության իրավունքների պահպանության և պաշտպանության ոլորտում:

2009-2011թթ. Մտավոր սեփականության գործակալությունը ձեռնամուխ եղավ Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության հրատարակությունների հայերեն լեզվով թարգմանությանը և մտավոր սեփականության ոլորտում հայաստանյան օրենքներին դրանց համապատասխանեցմանը: Այդ քայլն արդյունավետ էր նրանով, որ մենք ապահովեցինք հայերեն լեզվով խիստ կարևոր և անհրաժեշտ մասնագիտական գրականություն: Ներկայումս այդ հրատարակությունների հայերեն թարգմանությունները տեղադրված են գործակալության ինտերնետային կայքում, համապատասխանեցված են մեր երկրի օրենքներին ու ապահովում են անհրաժեշտ գիտելիքներ հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների, ապրանքային նշանների, արդյունաբերական նմուշների և գյուտերի վերաբերյալ, նպաստում իրավախախտումների կանխարգելմանը: Այդ հրատարակություններն են.

1. Արվեստը և հեղինակային իրավունքը
2. Գյուտեր և արտոնագրեր
3. Պատկերացում հեղինակային իրավունքի մասին
4. Պատկերացում արդյունաբերական սեփականության մասին
5. Ինչ է մտավոր սեփականությունը
6. Հեղինակային իրավունք /կոմիքս/
7. Ապրանքային նշան /կոմիքս/

Փոքր ու միջին ձեռնարկությունների համար՝

1. «Նշանի ստեղծումը» – ընդհանուր գիտելիքներ ապրանքային նշանի մասին
2. «Ձգտիր կատարելության» – ընդհանուր գիտելիքներ արդյունաբերական նմուշների մասին
3. «Կերտիր ապագան» – ընդհանուր գիտելիքներ գյուտերի, օգտակար մոդելների արտոնագրերի մասին
4. «Ստեղծագործական արտահայտություն» – ընդհանուր գիտելիքներ հեղինակային և հարակից իրավունքների մասին

5. «Ժամանակին համընթաց» – մտավոր սեփականության օգտագործումը տեքստիլ արդյունաբերության մեջ

6. Մտավոր սեփականության գաղտնիքները. Ուղեցույց արտահանողների համար:

Նշված գրքերը կօգնեն նաև փոքր ու միջին ձեռնարկատերերին՝ իրավախախտումներ թույլ չտալ իրենց գործունեությունն իրականացնելիս և հնարավորինս օգտվել իրենց տիրապետած մտավոր սեփականության իրավունքներից: Հետաքրքրված անձինք գրքերը կարող են անվճար ձեռք բերել մտավոր սեփականության գործակալությունից կամ ներբեռնել գործակալության կայքից. www.aipa.am :

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՆԵՐ, ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐ

Արդեն 19-րդ դարի սկզբներին շատ երկրներ ունեին հեղինակի իրավունքի մասին իրենց ազգային օրենքները և ժամանակ առ ժամանակ լրացնում կամ փոփոխում էին դրանք էլնելով ժամանակի, տեխնիկայի և գիտության զարգացմանը համապատասխանեցնելու պահանջներից:

Տպագրության հայտնագործությունը վճռական դեր խաղաց հեղինակային իրավունքի ոլորտում: Գրքի տպագրությունն ու տարածումը, լեզուների ուսումնասիրությունն ու իմացությունը, թարգմանությունները և, վերջապես, տարբեր ազգերի մշակութային արժեքների փոխանակումն աստիճանաբար հանգեցրին ստեղծագործության օգտագործման տարածքային սահմանների ու արգելքների վերացմանը:

Կտրուկ ընդարձակվեց հեղինակային իրավունքով պահպանվող ստեղծագործությունների համար թե՛ ազգային և թե՛ միջազգային շուկան. երաժշտական, դրամատիկական և արվեստի այլ ստեղծագործություններն անցան մայր երկրի սահմաններն ու սկսեցին ազատ օգտագործվել այլ պետություններում:

Անհրաժեշտ էր պահպանել ոչ միայն վերը նշված արժեքները ստեղծող հեղինակի իրավունքներն իր ստեղծագործության նկատմամբ, այլև կանոնակարգել հեղինակի և ստեղծագործությունն օգտագործողի փոխհարաբերություններն ինչպես իր երկրում, այնպես էլ այն երկրում, որտեղ կարող էր օգտագործվել ստեղծագործությունը:

Ստեղծվեց մի իրավիճակ, երբ տվյալ երկրի օրենքները, որոնք պահպանում էին իրենց տարածքում ստեղծված և միայն իրենց տարածքում օգտագործվող ստեղծագործությունները, անգոր էին պահպանություն ապահովել իրենց սահմաններից դուրս:

Այդ օրենքները պահպանություն չէին ապահովում նաև այլ երկրներում ստեղծված, բայց իրենց տարածքներում օգտագործվող ստեղծագործությունների նկատմամբ:

Հեղինակային իրավունքի ահա այս խիստ տարածքային բնույթն էր, որ անհրաժեշտություն առաջացրեց կնքելու այնպիսի երկկողմ պայմանագրեր, որոնք կապահովեին հեղինակային իրավունքի օբյեկտների նկատմամբ փոխադարձ պահպանությունը այն չափով, ինչ չափով նախատեսված էր իրենց երկրների քաղաքացիների համար: Սակայն, շատ շուտով պարզ դարձավ, որ այս պայմանագրերը նույնպես բավարար պահպանություն չեն կարող ապահովել ազգային օրենսդրությունների՝ իրարից տարբերվող դրույթների պատճառով:

Հարկավոր էր ստեղծել պահպանության մեկ միասնական համակարգ՝ որպես առևտրի արդյունավետության խթան, որը կապահովեր պահպանության նույնանման և ավելի լայն պայմաններ՝ ստեղծագործություններն այլ երկրների տարածքներում օգտագործվելու դեպքում: Եվ ահա, 1886թ. 10 պետություն միավորվեցին՝ ստեղծելով Միություն և Բեռնում ստորագրեցին միջազգային կոնվենցիա՝ «Գրական և գեղարվեստական ստեղծագործությունների պահպանության մասին» (այսուհետ՝ Բեռնի Կոնվենցիա): Կոնվենցիան ուժի մեջ մտավ 1887թ. դեկտեմբերի 5-ին: Կոնվենցիայի նպատակն էր անդամ երկրների տարածքներում հնարավորին չափով միասնական և ավելի արդյունավետ պահպանել ստեղծագործությունների հեղինակների իրավունքներն իրենց ստեղծագործությունների նկատմամբ:

Ժամանակի պահանջներին համապատասխանեցնելու և պահպանության միջազգային համակարգն անընդհատ կատարելագործելու նպատակով Կոնվենցիայի սկզբնական տեքստը բազմիցս վերանայվել է: Այն հեղինակային իրավունքի ոլորտում ամենահինն է: Գործող կոնվենցիայի տեքստը 1971թ. փարիզյան փոփոխված տարբերակն է:

Բեռնի Կոնվենցիա

Ինչ հարցեր է կարգավորում Բեռնի Կոնվենցիան:

Կոնվենցիան հիմնված է երեք հիմնական սկզբունքների և ներառում է մի շարք դրույթներ կոնվենցիայով նախատեսվող պահպանության նվազագույն ժամկետի և իրավունքների վերաբերյալ.

- Կոնվենցիայի մի անդամ-պետության տարածքում ստեղծված ստեղծագործությունները, այսինքն՝ այն ստեղծագործությունները, որոնց հեղինակը այդ անդամ երկրի քաղաքացի է կամ առաջին անգամ դրանք լույս են տեսել այդ երկրում, ենթակա են նույնպիսի պահպանության, ինչպիսին նախատեսվում այդ անդամ երկրում իր քաղաքացիների համար /ազգային մոտեցում/,
- պահպանությունը նախատեսվում է առանց որևէ ձևականության պահպանման /ավտոմատ, ինքնաբերաբար պահպանություն, այսինքն՝ պետական կամ նոտարական կամ այլ գրանցում կամ հեղինակության հաստատագրում չի պահանջվում/,
- պահպանությունն ապահովվում է անկախ մայր երկրում պահպանության առկայությունից, սակայն եթե անդամակցող երկիրը նախատեսում է պահպանության

ավելի երկար ժանկետ, քան նախատեսված է կոնվենցիայով և մայր երկրում ստեղծագործությունը դադարում է պահպանվելուց, ապա անդամ երկրներում նույնպես այդ հիմքով կարող է պահպանություն չնախատեսվել,

Ովքեր են օգտվում պահպանությունից:

Կոնվենցիայով նախատեսված պահպանությունը տարածվում է հեղինակի և նրա իրավահաջորդների վրա, պահպանվում են հեղինակի թե հրապարակված և թե չհրապարակված ստեղծագործությունները, եթե հեղինակը Կոնվենցիայի անդամ պետության քաղաքացի է կամ մշտական բնակիչ: Եթե հեղինակը անդամ-պետության քաղաքացի չէ և չունի մշտական բնակավայր այդ երկրներում, ապա օգտվում է Կոնվենցիայով ապահովվող պահպանությունից այն դեպքում, եթե նրա ստեղծագործությունն առաջին անգամ լույս է ընծայվել անդամ-երկրներում կամ միաժամանակ՝ Կոնվենցիայի անդամ-պետության և Կոնվենցիային չմիացած պետության տարածքներում:

2. Ստեղծագործությունների ու իրավունքների պահպանության նվազագույն չափանիշերը և ժամկետը.

Ստեղծագործությունների առումով պահպանությունը տարածվում է գրականության, գիտության և արվեստի ոլորտում ցանկացած ստեղծագործության վրա՝ անկախ դրա արտահայտման ձևից կամ միջոցներից: /2 հոդված/

Կոնվենցիան սահմանում է, որ գրական և գեղարվեստական երկերի հեղինակների բացառիկ իրավունքն է թույլատրել՝

- իրենց ստեղծագործությունների թարգմանությունը /թարգմանության իրավունք/,
- իրենց ստեղծագործությունների վերամշակման, վերադաշնակման, այլ փոփոխությունների կատարումը,
- դրամատիկական, երաժշտա-դրամատիկական, երաժշտական երկերի հրապարակային կատարումը,
- իրենց գրական ստեղծագործությունների հրապարակային ընթերցումը, ընթերցման հաղորդումը հանրությանը,
- իրենց ստեղծագործությունների եթեր հեռարձակումը,
- իրենց ստեղծագործությունների ցանկացած ձևով և միջոցներով վերարտադրությունը՝ ներառյալ ձայնատեսագրությունը / վերարտադրելու իրավունք/,
- իրենց ստեղծագործությունների կինեմատոգրաֆիական վերափոխումը, վերափոխման վերարտադրությունը, բեմադրությունը և դրանց հանրությանը հաղորդումը, հրապարակային ներկայացումը,
- արվեստի երկի վերավաճառքից մաս ունենալը /վարձատրություն ստանալու/ իրավունքը,
- նմանակված օրինակների վրա կալանք դնելը:

Բացի հեղինակի գույքային իրավունքներից Կոնվենցիան ապահովում է նաև ոչ գույքային /բարոյական/ իրավունքներ: Դրանք են՝ ստեղծագործության հեղինակ ճանաչվելու իրավունքը, ինչպես նաև ստեղծագործության աղճատումը, աղավաղումը, նրա հեղինակությանն ու պատվին վնաս պատճառող այլ փոփոխություններն արգելելու իրավունքը /անձեռնմխելիության իրավունք, այսօր՝ հեղինակի համբավի և արժանապատվության իրավունք/:

Կոնվենցիան նախատեսում է հեղինակի իրավունքների պահպանության նվազագույն ժամկետ՝ հեղինակի կյանքի տևողությունը և 50 տարի՝ նրա մահից հետո:

Այս ժամկետը սահմանվել է հեղինակի ստեղծագործական ոգին խթանելու, ինչպես նաև հեղինակի հաջորդ սերունդների համար բարենպաստ կենսապայմաններ ապահովելու նպատակով: Սակայն անանուն կամ կեղծանունով ստեղծագործությունների դեպքում պահպանության ժամկետը հաշվվում է այդպիսի ստեղծագործության օրինական ճանապարհով հանրությանը մատչելի դառնալուց հետո:

Եթե հեղինակի կեղծանունը կասկած չի հարուցում, այսինքն հայտնի այն կրող հեղինակի ինքնությունը (այսինքն մենք գիտենք, որ Գևորգ Էմինը՝ նույն ինքը Կառլեն Մուրադյանն է), ապա պահպանությունը հաշվվում է մահից հետո 50 տարի:

Համահեղինակությամբ ստեղծված երկերի դեպքում պահպանության հետմահու 50-ամյա ժամկետը հաշվվում է վերջին համահեղինակի մահից հետո:

Հեղինակի բացառիկ իրավունքների հետ մեկտեղ Կոնվենցիան նախատեսում է նաև իրավունքի որոշ սահմանափակումներ, երբ ստեղծագործությունը կարող է օգտագործվել առանց հեղինակի թույլտվության և առանց վարձատրության՝ տեղեկատվության, քաղվածքների, մեջբերումների, ուսուցողական նպատակով մեկնաբանությունների, կարճաժամկետ օգտագործման ձայնագրությունների տեսքով, (այսինքն՝ ազատ օգտագործման դեպքեր, 10-րդ հոդված):

Կոնվենցիան ունի նաև Լրացուցիչ բաժին, որը նրա անօտարելի մասն է, նախատեսված է զարգացող երկրների համար և հատուկ պայմաններ է նախատեսում թարգմանության և վերարտադրության իրավունքների համար, այսինքն սահմանում է հեղինակի իրավունքների որոշակի սահմանափակումներ նրանց ստեղծագործությունների թարգմանության և վերարտադրության դեպքերում:

Հեղինակային իրավունքի միջազգային պահպանության խնդրի կարգավորումը ամուր հիմքեր ապահովեց ազգային մշակութային արժեքների փոխանակման համար: Կոնվենցիային միանալը մեծ աջակցություն էր հայ հեղինակներին՝ արտասահմանյան երկրներում հեշտությամբ գործընկերներ ձեռք բերելու առումով և, ինչ խոսք, խթան հանդիսացավ ներքին շուկայում ստեղծագործող հեղինակների մրցունակության աճի համար:

Կոնվենցիային միանալը նաև սոցիալ-տնտեսական կարևորություն ունեցավ, քանի որ այսօր Հայաստանը դարձել է մտավոր սեփականության՝ հատկապես հեղինակային իրավունքի պահպանության միջազգային կառույցի օղակ: Սա շատ

կարևոր է մշակույթի, տեղեկատվության և տեխնոլոգիաների փոխանակման, ինչպես նաև ներդրումների հոսքն այդ ոլորտում ապահովելու իմաստով:

Հայաստանի Հանրապետությունը «Գրական և գեղարվեստական երկերի պահպանության մասին» Բեռնի կոնվենցիայի լիիրավ անդամ է 2000թ. հոկտեմբերի 19-ից:

Այսօր կոնվենցիային անդամակցում են 166 երկիր:

Հարակից իրավունքներ Հռոմի Կոնվենցիա

Հարակից իրավունքները ի հայտ են եկել շատ ավելի ուշ, քան հեղինակային իրավունքը: Դրանք տեխնիկայի զարգացման արդյունք են: Երկար քննարկումների առարկա էր այդ իրավունքների անվանման հարցը՝ անվանել հեղինակային իրավունքին հարակից, առնչվող թե կից: Այնուամենայնիվ, հարակից անվանումը նպատակահարմարության տեսակետից կարծես թե հաստատեց իրեն:

Նախկին Մովետական Միությունում հարակից իրավունքները ճանաչվել են 90-ականների սկզբին, իսկ Հայաստանում՝ 1996 թվականին, երբ առաջին անգամ առանձին օրենք ընդունվեց հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին: Հարակից իրավունքները սերտորեն առնչվում են հեղինակային իրավունքին, սկիզբ են առնում ստեղծագործությունից, որը կատարվում է, ձայնագրվում կամ հաղորդվում ռադիոհեռուստատեսությամբ կամ կաբելով, սակայն չեն տարածվում անմիջապես ստեղծագործության վրա:

Դրանք տարածվում են գործունեության այն տեսակների վրա, որոնք աջակցում են ստեղծագործության տարածմանը, այլ ոչ թե գրական կամ գեղարվեստական ստեղծագործության ստեղծմանը, այսինքն՝ ստեղծագործությունն ամփոփող իրերի (ձայներիզ, տեսաերիզ) կամ ստեղծագործությունը հանրությանը ներկայացնելու ձևերի վրա:

Ինչպես Յոհան Գուտենբերգի կողմից տպագրական սարքի հայտնագործումը սկզբնավորեց հեղինակային իրավունքը, այնպես էլ Թոմաս Ա. Էդիսոնի՝ հնչյունագրի, Լուի և Օգյուստ Լյումեր եղբայրների՝ կինոյի, Հենրիխ Ռ. Հերցի և Գուլելմո Մարկոնիի ռադիոյի հայտնագործությունները հանգեցրին տեխնիկայի զարգացմանը, իսկ այնուհետև՝ հարակից իրավունքների ճանաչմանը: Ինչպես տպագրական սարքն ապահովում էր գրքերի տպագիր բազմաթիվ օրինակներ՝ անկախ հեղինակի կամքից, այնպես էլ հնչյունագիրը, կինոն և եթերային հաղորդումը հնարավոր դարձրեցին երաժշտական, գրական և գեղարվեստական ստեղծագործությունների մեխանիկական վերարտադրությունը և ապահովեցին դրանց հաղորդումը հանրության անսահմանափակ լսարանին:

Ինչպես արդեն բազմիցս խոսվել է, ստեղծագործություն ստեղծող անձի նպատակն է ստեղծագործությունը ստեղծելուց հետո հնարավորին չափով լայնորեն

տարածել այն հանրության շրջաններում: Մակայն հեղինակն ինքնուրույն ի վիճակի չէ իրականացնել այդ գործընթացը, անհրաժեշտ են այնպիսի անձիք, որոնք ստեղծագործության և հասարակության միջև միջնորդ օղակի դեր են տանում:

Կոմպոզիտորի ստեղծած երգը հանրությանը հասանելի է դառնում երգչի կամ երաժիշտի կատարման, (հնչյունագրերի) ձայնագրության կամ ռադիո-հեռուստատեսության հաղորդումներում հեռարձակելու միջոցով, դրամատուրգի գրած պիեսը՝ դերասանների օգնությամբ բեմադրության, գրողի ստեղծած գրական երկը հրատարակչի կողմից հրատարակվելու միջոցով և այլն: Այն անձինք, ովքեր ստեղծագործական կամ ֆինանսական ներդրումների շնորհիվ կամ կազմակերպչական հմտությունների և համապատասխան սարքավորումների օգնությամբ ստեղծագործությունը մատչելի են դարձնում հանրությանը, հանդիսանում են հարակից իրավունքների սուբյեկտներ:

Ինչպես առաջացավ հարակից իրավունքների սուբյեկտների իրավունքների պահպանության անհրաժեշտությունը: Ինչպես գիտեք ստեղծագործությունը նախատեսված է հանրության լայ շրջանների համար, տարբեր ստեղծագործություններ մատչելի են դառնում հանրությանը բազմազան ձևերով: Հրատարակիչը պարզապես հրատարակում է գրողի ձեռագիրը վերջնական ուղղված տեսքով, առանց որևէ փոփոխություն կատարելու, դրամատիկական, երաժշտական, մնջախաղի և այլ ստեղծագործությունները, որոնք նախատեսված են ունկնդրելու կամ դիտելու համար, հասարակությանը հասանելի են դառնում, բեմադրվում, կատարվում կամ ասմունքվում կատարողների միջոցով:

Տեխնիկայի սրբնթաց զարգացումը էլ ավելի կարևորեց հեղինակի և հանրության միջև կապող օղակի դերը: Եթե նախկինում դերասանի խաղը ավարտվում էր պիեսի բեմադրության ավարտի հետ մեկտեղ, երաժիշտ-կատարողի կատարումը՝ համերգի ավարտի հետ, ապա հետագայում, ռադիոյի, կինեմատոգրաֆիայի, հեռուստատեսության, տեսամագնիտոֆոնների և այլնի ի հայտ գալու հետ արմատապես փոխվեց իրադրությունը: Հնարավորություն ընձեռվեց կատարումը ֆիքսել բազմազան կրիչների վրա և բազմաթիվ անգամներ օգտագործել, վերարտադրել: Մեկ անգամ ձայնագրվելուց և վարձատրություն ստանալուց հետո կատարողն այլևս զրկվում էր հետագա վարձատրության հնարավորությունից, քանի որ օգտագործվում էր նրա կատարումների հնչյունագրերը առանց նրա ներկայության ու համաձայնության: Նույնն էր նաև ռադիո-հեռուստատեսությունը. գրական-գեղարվեստական երկերի դիտում-լսումը չէր սահմանափակվում մեկ անգամով, միայն դահլիճում ներկաների համար, այլ դրանք արդեն մատչելի էին բազմահազար մարդկանց հասարակական տարբեր վայրերում, տանը, դահլիճում, հյուրանոցում, ռեստորանում, նաև հանրապետության սահմաններից դուրս:

Կատարողների կատարումների ձայնագրությունները հնարավոր էր բազմիցս եթեր հեռարձակել առանց նրանց մասնակցության կամ ներկայության:

Կատարողները և ձայնագրություն /հնչյունագիր/ արտադրողները կարիք ունեին պահպանել իրենց իրավունքները, արգելել կատարումների

ձայնագրությունների բազմացումն ու հեռարձակումը: Եվ, վերջապես, հեռարձակող կազմակերպություններն էլ իրենց հերթին անհանգստացած էին իրենց պատրաստած հաղորդումներն այլ հեռարձակող կազմակերպությունների կողմից հեռարձակելու և վերահեռարձակելու խնդիրներով:

Իրավիճակի նկարագրությունից ակնհայտ է, որ անհրաժեշտ էր ապահովել կատարողների, հնչյունագիր արտադրողների և հեռարձակող կազմակերպությունների իրավունքների պահպանությունը: Միջազգային ոլորտում դեռևս 1948 թվականից մի շարք միջազգային կազմակերպությունների փորձագետներ քննարկում էին կատարողների և հնչյունագրեր արտադրողների իրավունքների պահպանության հարցը, մշակում միջազգային կոնվենցիաների նախագծեր: Միայն 1960թ. Հաագայում փորձագետների խորհրդակցության ժամանակ ՅՈՒՆԵՍԿՕ-ի, Աշխատանքի Միջազգային Կազմակերպության, Մտավոր Սեփականության Պահպանության Միջազգային Բյուրոյի (ՄՍՀԿ-ի նախորդը) հետ համատեղ մշակվեց կոնվենցիայի նախագիծը և 1961թ. հոկտեմբերի 26-ին Հռոմում կայացած դիպլոմատիկ խորհրդակցության ժամանակ ընդունվեց՝

Միջազգային Կոնվենցիա Կատարողների, Հնչյունագրեր արտադրողների և Հեռարձակող կազմակերպությունների իրավունքների պահպանության մասին, որը հետագայում հայտնի դարձավ Հռոմի կոնվենցիա անունով (ստորագրման վայրի անունն է): Կոնվենցիան ուժի մեջ մտավ 1964թ. մայիսի 18-ին:

Այն ապահովում էր հարակից իրավունքների պահպանության միջազգային կանոնակարգ այն դեպքում, երբ շատ երկրներ իրենց օրենսդրություններում դեռևս հարակից իրավունքների պահպանություն չէին էլ նախատեսել: Նախքան կոնվենցիային անդամակցելը այդպիսի պետությունները փոփոխում են ոլորտում առկա իրենց օրենքը՝ համապատասխանեցնելով կոնվենցիայի դրույթներին:

Կատարողներն իրավունք ստացան թույլատրել կամ արգելել իրենց կենդանի կատարումների ամրագրումները, դրանց վերարտադրությունը, հեռարձակումը:

Հնչյունագրեր արտադրողները՝ թույլատրել կամ արգելել իրենց արտադրած հնչյունագրերի վերարտադրությունը, իսկ հեռարձակող կազմակերպությունները նույն իրավունքները ձեռք բերեցին իրենց հաղորդումների վերահեռարձակման, հաղորդման ամրագրման, այդպիսի ամրագրումների վերարտադրության, վճարովի մուտքով վայրերում իրենց հաղորդումները հանրությանը հաղորդելու նկատմամբ:

Կոնվենցիան նաև նախատեսում էր հարակից իրավատերերի իրավունքների որոշակի սահմանափակումներ՝ անձնական, տեղեկատվական, ուսումնական նպատակով օգտագործում, ժամանակավոր վերարտադրում և այլն: Եթե կատարողը համաձայնություն է տվել իր կատարումը ընդգրկել տեսողական կամ տեսալսողական ամրագրման մեջ, այդպիսի դեպքերում կատարողի իրավունքների նկատմամբ դրույթները ալևս չեն կիրառվում:

Կոնվենցիայի 12-րդ հոդվածը նախատեսում էր առևտրային նպատակով արտադրված հնչյունագրերը հրապարակայնորեն հաղորդելու, հանրությանը

մատչելի դարձնելու դեպքում կատարողին և հնչունագիր արտադրողին կամ նրանցից մեկին

(մյուսի բաժինը վճարելու պայմանով) օգտագործողի կողմից միանվագ վարձատրության վճարում, սակայն առանց թույլտվությունը ձեռքբերելու:

Հռոմի կոնվենցիան հարակից իրավունքների պահպանության նվազագույն ժամկետ սահմանել է 20 տարի՝

հաշված հնչունագրերի և դրանցում ընդգրկված կատարումների ամրագրման տարվա ավարտից,

կենդանի կատարումը տեղի ունենալուց հետո,

հեռուստահաղորդման հեռարձակումից հետո:

ՀՀ օրենսդրությունը այդ ժամկետը երկարաձգել է մինչև 50 տարի:

Մտավոր Սեփականության Համաշխարհային Կազմակերպությունը ՅՈՒՆԵՍԿՕ-ի, Աշխատանքի Միջազգային Կազմակերպության հետ մեկտեղ իրականացնում են կոնվենցիայի ղեկավարումը: Այս երեք կազմակերպությունները կազմում են Միջպետական Կոմիտեի Քարտուղարությունը, որը նախատեսված է Կոնվենցիայով և բաղկացած է անդամակցող 12 պետությունների ներկայացուցիչներից:

Հայաստանը «Կատարողների, հնչունագրեր արտադրողների և հեռարձակող կազմակերպությունների իրավունքների պահպանության մասին» Հռոմի կոնվենցիային միացավ 2003թ. հունվարին: Ներկայումս կոնվենցիային անդամակցում են 91 երկիր:

Ժնևի Հնչունագրերի կոնվենցիա (1971թ.)

29.10.1971թ. Ժնևում ստորագրված «Հնչունագրեր արտադրողների հնչունագրերն անօրինական կրկնօրինակումից պաշտպանելու մասին» կոնվենցիան (համառոտ՝ Ժնևի Հնչունագրերի կոնվենցիա) անդամ երկրների համար սահմանում է պարտականություն՝ պաշտպանել անդամ երկրի հնչունագրեր արտադրողների իրավունքները և շահերը մյուս անդամ երկրում նրանց հնչունագրերի անօրինական, առանց թույլտվության կրկնօրինակումների դեպքերում, առանց թույլտվության պատճենահանված օրինակները վաճառքի և հանրության շրջանում տարածելու, տարածման նպատակով ներմուծելու դեպքերում՝ պարտադրելով, որ այդ պատճենահանումը լինի միայն հնչունագիր արտադրողի համաձայնությամբ և հնչունագրի օրինակի վրա նրա անվանման կամ անվան նշմամբ, ինչպես նաև առաջարկում է անդամ-երկրներին իրենց օրենսդրություններում հեղինակային իրավունքի, հարակից իրավունքների կամ անագնիվ մրցակցության մասին օրենքներով անօրինական վերարտադրության դեմ նախատեսել իրավական միջոցներ:

Այս կոնվենցիան ուղղված է պիրատության դեմ, նվազագույն պահպանության ժամկետ նախատեսվում է հնչյունագրի առաջին ամրագրումից կամ առաջին լույս ընծայումից հետո 20 տարի, թեև ազգային օրենսդրությունն այդ ժամկետը երկարաձգել է 50 տարի:

Հայաստանն անդամակցում է այս կոնվենցիային 2003թ. հունվարից, անդամ երկրները 77 են:

**ՄՄՀԿ Հեղինակային իրավունքի մասին պայմանագիր,
Կատարումների ու հնչյունագրերի մասին պայմանագիր
(Ինտերնետային պայմանագրեր, ՄՄՀԿ 1996թ.)**

Նոր տեխնիկան լայն հնարավորություններ ու դոներ է բացում ստեղծագործությունների ու կատարումների կոմերցիոն օգտագործման համար:

1996թ. Ժնևում ստորագրված Մտավոր Սեփականության Համաշխարհային Կազմակերպության (ՄՄՀԿ, WIPO) Հեղինակային իրավունքի պայմանագիրը հեղինակների իրավունքների պահպանություն է նախատեսում հատկապես թվային միջավայրում՝ Ինտերնետում և կոչվում է Ինտերնետային պայմանագիր, քանի որ, ինչպես արդեն գիտենք, Բեռնի կոնվենցիան ստորագրվել էր շատ վաղուց և թեև գրեթե 20 տարին մեկ վերանայվում ու փոփոխվում էր, այնուամենայնիվ հետ էր մնում ժամանակից գիտության ու տեխնիկայի զարգացման տեսանկյունից և չէր ապահովում ստեղծագործությունների նոր տեսակների ու օգտագործման նոր եղանակների պահպանություն: Պայմանագիրն ուժի մեջ կարող էր մտնել 30 երկրի անդամակցությունից հետո միայն:

Պայմանագիրն ուժի մեջ է մտել 2002թ. մարտի 6-ին, անդամակցող երկրների թիվն այսօր հասել է 90-ի:

Ի լրումն Գրական և Գեղարվեստական երկերի պահպանության մասին Բեռնի կոնվենցիայի, այս պայմանագիրը հեղինակային իրավունքի պահպանությունը տարածում է նաև՝

համակարգչային ծրագրերի վրա, անկախ նրանց արտահայտման ձևից և եղանակից,

տվյալների կամ այլ նյութերի ցանկացած ձևով կոմպիլյացիայի վրա, որն իր բովանդակության ընտրության կամ տեղաբաշխման տեսակետից ստեղծագործական աշխատանք է հանդիսանում: Սակայն պետք է նաև նշել, որ չափազանց դժվար է ապացուցել նյութերի ընտրության ու տեղաբաշխման աշխատանքի ստեղծագործական լինելը, այդ իսկ պատճառով կոմպիլյացիան գրեթե միշտ համարվում է ստեղծագործական աշխատանքի արդյունք:

Ինչ վերաբերում է հեղինակների իրավունքներին, պայմանագիրը կարգավորում է ներքոնշյալ բացառիկ իրավունքները.

Տարածման իրավունքը - թույլատրում է ստեղծագործության բնօրինակը կամ օրինակները հանրությանը մատչելի դարձնելը վաճառքի կամ սեփականության իրավունքի այլ փոխանցման միջոցով.

Վարձույթի իրավունքը- թույլատրում է համակարգչային ծրագրի, կինեմատոգրաֆիական ստեղծագործության, հնչյունագրերում ամփոփված ստեղծագործությունների բնօրինակի կամ օրինակների առևտրային վարձույթը հանրությանը,

Հանրությանը հաղորդման իրավունքը- թույլ տալ, որ ստեղծագործությունները հանրության անդամներին հասանելի լինեն իրենց ընտրությամբ ցանկացած պահին և ցանկացած վայրից (Ինտերնետի միջոցով):

Պայմանագիրը պարտադրում է Կողմերին իրավական միջոցներ ապահովել հեղինակների կողմից ստեղծագործությունները ցանցերում տեղադրելիս իրենց կողմից չթույլատրված գործողությունները արգելելու նպատակով օգտագործվող տեխնոլոգիական միջոցների (օր.կոդավորումը) գիտակցաբար շրջանցումների դեմ, որոնք առաջացնում են հեղինակային և հարակից իրավունքների խախտումներ, ինչպես նաև իրավունքների վերաբերյալ տեղեկատվությունը, որը նույնացնում է ստեղծագործությունը կամ հեղինակին և անհրաժեշտ է իրավունքների կառավարման համար (օր, լիցենզավորումը, հոնորարների հավաքումն ու բաշխումը), առանց թույլտվության վերացնելու կամ փոփոխելու գործողությունների դեմ: Այսպիսի իրավախախտում բովանդակող գործողությունների համար նույնպես նախատեսվում են այնպիսի համարժեք պատժամիջոցներ, որոնք կիրառվում են հեղինակային իրավունքի խախտումների դեպքերում:

ՄՄՀԿ Կատարումների և հնչյունագրերի պայմանագիրը տարածվում է՝

1. կատարողների (երաժիշտ, երգիչ, դերասան)
2. հնչյունագիր արտադրողների վրա, իրավաբանական կամ ֆիզիկական անձինք ովքեր նախաձեռնում են և պատասխանատու են հնչյունների ամրագրման համար:

Պայմանագիրը կատարողների համար նախատեսում է հնչյունագրում ամրագրված իրենց կատարումների նկատմամբ հետևյալ բացառիկ գույքային իրավունքները՝

վերարտադրության- թույլատրել ցանկացած ձևով հնչյունագրի վերարտադրությունը,

տարածման - թույլատրել ցանկացած ձևով հնչյունագրի բնօրինակը կամ օրինակները մատչելի դարձնել հասարակությանը վաճառքի կամ սեփականության այլ փոխանցման միջոցով,

վարձույթի- թույլատրել հնչյունագրի բնօրինակի կամ օրինակների առևտրային վարձույթը և մատչելի դարձնելու իրավունքը- թույլատրել հնչյունագրում ամրագրված կատարման մատչելի դարձնելը հանրությանը լարերվ կամ անլար միջոցներով այնպիսի եղանակով, որ հասարակության անդամներին դրանք

հասանելի լինեն իրենց ընտրությամբ ցանկացած վայրից ցանկացած պահին (ինտերնետ):

Չամբագրված (կենդանի) կատարումների նկատմամբ կատարողներն օգտվում են հեռարձակման, հանրությանը հաղորդելու և ամբազրման իրավունքներից:

Հնչյունագրեր արտադրողները ևս օգտվում են իրենց հնչյունագրերի նկատմամբ վերարտադրության, տարածման, վարձույթի և մատչելի դարձնելու նույնատիպ իրավունքներից, ինչ կատարողները (քանի որ կատարումն ու հնչյունագիրը խիստ միաձուլված են իրար):

Կոմերցիոն նպատակով արտադրված հնչյունագրերի հեռարձակման կամ հանրությանը հաղորդելու դեպքերում նույնպես կատարողներն ու հնչյունագրեր արտադրողները միանվագ վարձատրություն ստանալու իրավունք ունեն:

Պահպանության նվազագույն ժամկետ սահմանված է 50 տարի, իրավունքների պահպանության համար նույնպես ձևականություններ չեն պահանջվում (գրանցում, պաշտոնական վավերացում):

Այս պայմանագիրը նույնպես Կողմերին պարտավորեցնում է նախատեսել իրավախախտների դեմ պատժամիջոցներ՝ տեխնիկական միջոցների շրջանցումների և իրավունքների կառավարման տեղեկատվության վերացման դեպքերում:

Ուժի մեջ է մտել 2002թ. մայիսի 20-ին, անդամակցում են 90 երկիր:

Հայաստանը միացել է ՄՍՀԿ Ինտերնետային պայմանագրերին 2005թ. մարտին և հնարավորինս ապահովում է ստեղծագործողների, կատարողների իրավունքների պահպանությունը հատկապես թվային միջավայրում և ցանցերով ստեղծագործությունների օգտագործման նոր ձևերի դեպքում:

Մտավոր սեփականության իրավունքների՝ առևտրին առնչվող հայեցակետերի մասին համաձայնագիր (TRIPS):

Առևտրի համաշխարհային կազմակերպությունը (ԱՀԿ) միջազգային կազմակերպություն է, որն առնչվում է առևտրի միջազգային կանոններին: Դրա նպատակն է հեշտացնել երկրների միջև առևտուրը մրցակցության ազնիվ եւ արդարացի պայմաններ ստեղծելու միջոցով: Այն խրախուսում է երկրներին՝ բանակցությունների մեջ մտնել տարիֆների/գների նվազեցման եւ առևտրի այլ արգելքների վերացման համար, եւ պահանջում է , որ նրանք ապրանքների եւ ծառայությունների առևտրում կիրառեն ընդհանուր կանոններ: Այդպիսի կանոնների ամբողջություններից մեկը, որն առնչվում է մտավոր սեփականությանը, պարունակվում է ԱՀԿ Մտավոր սեփականության իրավունքների՝ առևտրին առնչվող հայեցակետերի մասին համաձայնագրում (TRIPS Համաձայնագիր):

TRIPS Համաձայնագիրը, որը պարտադիր է Առևտրի Համաշխարհային Կազմակերպության անդամ 157 պետությունների համար, փորձում է նեղացնել այն անդունդը, որ կա մտավոր սեփականության իրավունքների պահպանության

եղանակների միջև ամբողջ աշխարհում եւ սահմանել ընդհանուր միջազգային կանոններ, որոնք հայտնի են որպես մտավոր սեփականության (ՄՍ) պահպանության «նվազագույն նորմեր եւ չափորոշիչներ»: Քանի որ TRIPS Համաձայնագիրը պահանջում է համապատասխանություն այդ նորմերին եւ չափորոշիչներին, անդամ-երկրները պետք է հաստատեն կամ փոփոխեն ըստ դրանց իրենց օրենքները, ՄՍ իրավունքների գրանցման, տրամադրման, կիրարկման եւ պաշտպանության կանոնակարգերն ու ընթացակարգերը: ՄՍ իրավունքների՝ TRIPS Համաձայնագրի դրույթներին վերաբերող առեւտրային վեճերի դեպքում ձեռնարկության կհասնի վեճերի կարգավորման ԱՀԿ համակարգը: Համաձայնագիրն ընդգրկում է հինգ լայն ոլորտ.

-ինչպես պետք է կիրառվեն առեւտրի միջազգային համակարգի ու մյուս ՄՍ միջազգային համաձայնագրերի հիմնական սկզբունքները,

-ինչպես ապահովել ՄՍ իրավունքների համապատասխան պահպանություն,

-ինչպես պետք է երկրները ՄՍ իրավունքների համապատասխան պաշտպանություն ապահովեն իրենց տարածքներում,

-ինչպես կարգավորեն ԱՀԿ անդամ-պետությունների միջև ՄՍ վեճերը, եւ

-անցումային ժամանակաշրջանի դրույթներ նոր համակարգին անցնելու դեպքում:

Թեեւ ձեռնարկությունների համար կարող է օգտակար լինել ՄՍ իրավունքներով պահպանվող ապրանքների ու ծառայությունների առեւտրի միջազգային մակարդակով խաղի կանոնները հասկանալը, սակայն ազգային կամ տարածաշրջանային ՄՍ օրենքներն են, որ հիմքեր են ապահովում ՄՍ իրավունքների գրանցման, շնորհման, շահագործման եւ պաշտպանության համար:

Հաղորդումներ պարունակող ազդանշաններն արբանյակների միջոցով տարածման մասին կոնվենցիա (Արբանյակային կոնվենցիա)

Բացի նշված կոնվենցիաներից գոյություն ունի նաեւ հաղորդումներ պարունակող ազդանշանների արբանյակների միջոցով տարածմանն առնչվող կոնվենցիա, որը ստորագրվել է 1974թ. մայիսին Բրյուսելում, եւ հայտնի է Արբանյակների մասին կոնվենցիա կրճատ անվանումով:

Այս կոնվենցիան համարվում է հատուկ կոնվենցիա, անդամակցությունը բաց է պայմանավորվող պետությունների համար այն փաստի ուժով, որ այս կոնվենցիան նախատեսում է հեռարձակող կազմակերպությունների համար էլ ավելի լայն իրավունքներ, քան տրվում էր Հռոմի կոնվենցիայով կամ նախատեսում է դրան չհակասող լրացուցիչ դրույթներ:

Արբանյակների մասին կոնվենցիայի ընդունումը թելադրված էր նրանով, որ 1965 թվականից ի վեր միջազգային մասշտաբով արբանյակային կապի

օգտագործումը հեռարձակող կազմակերպությունների իրավունքների պաշտպանության գործում նոր բարդություն առաջացրեց: Կոնվենցիան չի նախատեսում իրավախախտումների դեմ իրավական միջոցներ, ինչպես նաև չի առաջացնում ազգային ռեժիմի հարց, նաև պահպանության ժամկետ: Այս հարցերը ենթակա են կարգավորման ազգային օրենսդրությամբ:

Կոնվենցիայի նպատակն է պաշտպանություն նախատեսել հեռարձակող կազմակերպություններին վնաս պատճառող որոշակի գործողությունների դեմ, ինչպիսիք են պիրատությունը կամ իրավախախտումը: Կոնվենցիայի հիմնական պարտավորությունն է «կանխել հաղորդումներ պարունակող ազդանշանների տարածումը որևէ տարածող կազմակերպության կողմից, որի համար չեն նախատեսվել արբանյակով անցնող հաղորդումներ պարունակող ազդանշանները:»

Այս պարտավորությունը կարող է կիրարկվել հեղինակային իրավունքի կամ հեռահաղորդակցության մասին օրենքներով, կամ տուգանքների /պատժամիջոցների/ կիրառմամբ: Անհրաժեշտ է նշել, որ կոնվենցիայի պաշտպանության առարկան ոչ թե փոխանցված հաղորդումն է, այլ ավելի շուտ մայր կազմակերպությունից ստացված ազդանշանները: Հաղորդումներում ընդգրկված մտավոր սեփականության իրավունքների վերաբերյալ կոնվենցիան պարզապես նշում է, որ այն չի կարող դիտվել որպես հեղինակների, կատարողների, հնչյունագրեր արտադրողների կամ հեռարձակող կազմակերպությունների իրավունքների պահպանությունը սահմանափակող կամ որևէ կերպ վնաս պատճառող:

Արբանյակային կոնվենցիան նույնպես, ինչպես եւ մյուս միջազգային փաստաթղթերը, նախատեսում է պահպանության որոշակի սահմանափակումներ. թույլատրվում է հաղորդումներ պարունակող ազդանշանների տարածումը չլիազորված անձանց կողմից, եթե ազդանշանները պարունակում են ընթացիկ իրադարձությունների մասին տեղեկություններ, կամ քաղվածքներ կամ հաղորդումների կարճատեւ հատվածներ, իսկ զարգացող երկրների համար՝ եթե ազդանշաններից ստացվող հաղորդումը տարածվում է բացառապես ուսուցողական կամ գիտահետազոտական նպատակներով:

Հայաստանն անդամակցում է այս կոնվենցիային 1993թ. դեկտեմբերից: Անդամակցող երկրներն այսօր 35-ն են:

© Մոնյա Վարդանյան

Մտավոր սեփականության գործակալության

հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների բաժնի պետ

sonya-vardanyan@mail.ru, sonya_vardanyan2002@yahoo.com

